

ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Անժելա Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ազգային գրադարանը գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական, միջգրադարանային բաժնույթի, տեղեկատվության և գրքափոխանակության համապետական կենտրոն է:

Գրադարանի պատմության սկիզբը համարվում է 1832 թվականը, երբ հիմնադրվեց Երևանի Արական գիմնազիայի գրադարանը, իսկ հետագայում՝ 1919թ. , գրադարանը ստացավ պետական գլխավոր գրադարանի կարգավիճակ:

Հետագա տարիների ընթացքում Արական գիմնազիայի 18 000 միավոր գրականությանը ավելացան մի շարք հայկական կազմակերպությունների, խմբագրությունների, կրթական և ուսումնական հաստատությունների հավաքածուներ, ինչպես նաև տարբեր քաղաքներում գտնվող հայ պետական հասարակական, գիտական և մշակութային նշանավոր գործիչների անձնական գրադարանները:

Այդ թվում են՝ Երևանի Կանանց գիմնազիան, Երևանի թեմական դպրոցը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Հրատարակչական ընկերությունը, Հայ կանանց միությունը, Թիֆլիսի Հայկական ակումբը, Ղուկասյան մատենադարանը, Հայաստանի պետական թանգարանը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, ինչպես նաև **Ղորղանյան** գրադարանը, որը նվիրաբերեց ինչպես գրքեր, այնպես էլ՝ գույք,

Զգալի դեր խաղաց նաև Խաչատուր Աբովյանի տեսչական գործունեությունը /1843-1848թթ/, ինչի շնորհիվ ձեռք բերվեց մեծ թվով գրքեր ու ամսագրեր:

Գրադարանի նվիրատու հայ պետական հասարակական, գիտական և մշակութային նշանավոր անուններից են. Թիֆլիսից՝ Համբարձում Առաքելյան, Անտոն Թերզյան, Հ. Յաղուբյան, Մենտոր Բունիաթյան, Մուրացան, Սպանդար Սպանդարյան, Տիգրան Նազարյան, **Ն.Արղության, Ալեքսանդր Մյասնիկյան, Լեռ, Մանանդյան, Թուրունջյան**, նկարիչ Նաբաթով, Բագրատ Նավասարդյան, Դանուշ Շահվերդյան, Մոսկվայից՝ Վահան Տեր-Վահանյան, պրոֆ. Գ. Խալաթյանց, Գ. Քանանով, Ք. Խասպեկյան, Ռ. Քաթանյան, Մ. Էմին, Լևոն Մսերյան, Վ. Սուրենյանց, Լենինգրադից՝ դոկտոր Զավրիև (ստացվել է Շահնազարյանի միջոցով), Ստեփան Սերեբրյակով, Օդեսայից՝ Վ. Թահիրով, Փարիզից՝ Արշակ Զոպանյան, Վիեննայից՝ Ներսես Ակինյան, Զիկագոյից՝ Աստղիկ Դեմճյան, Լոնդոնից՝ պրոֆ. Թումանյան, Պետրոս Տոնապետյան /Իտալիա և Լոնդոն/ և այլն:

Հավաքածուների մեծ մասը ձուլվել են գրադարանի գրքային ունեցվածքին, իսկ մի շարք հավաքածուներ /Արդության, Ղորդանյան, Մյասնիկյան, Լեո, Մանանդյան, Թուրունջյան/ պահպանվում են առանձին:

Դեռ 1922-23 թթ.-ից սկսված, Ազգային /այն ժամանակ՝ Հանրային/ գրադարանը եղել է պետության հոգածության ներքո: Հնարավորության սահմաններում, այդ թվում նաև գնումներով, ձեռք է բերվել տարբեր երկրներում հրատարակված հայկական գրականություն՝ Կովկասի և Մերձավոր Արևելքի, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ:

1924թ.-ից գրադարանը սկսում է ստանալ Հայաստանում լույս ընծայվող տպագիր արտադրանքի պարտադիր անվճար օրինակներ:

Գրադարանի գրքային ունեցվածքը տարբեր հավաքածուներից կազմակերպվելու պատճառով առաջանում է կրկնօրինակների զգալի թիվ: Այդ պատճառով դեռ իր գործունեության առաջին տարիներից գրադարանը կազմակերպում է կրկնօրինակների և իրեն ոչ անհրաժեշտ հրատարակությունների առանձնացման աշխատանքներ՝ նշված գրականությունը հանրապետության տարբեր գրադարաններին հատկացնելու համար:

Առանձնացված ունեցվածքը հետագայում ծառայել է նաև գրքափոխանակության կազմակերպմանն ու զարգացմանը: Այս ուղին գրադարանի ունեցվածքի համալրման համար համարվեց նպատակահարմար միջոց:

Այսպես՝ 1927-28 թթ.-ին առանձնացված կրկնօրինակներից կազմվեց առանձին **գրքափոխանակության ֆոնդ**: Գրքափոխանակության ֆոնդի ստեղծումը գրադարանին մի կողմից հնարավորություն տվեց համալրել գրքային ֆոնդերը, մյուս կողմից՝ ազատվել չօգտագործվող գրականությունից:

Դեռ 1924թ. մարտին քննարկվեց արտասահմանյան երկրների հետ պաշտոնական հրատարակություններ փոխանակելու նախագիծ, որին հավանություն տվեցին հանրապետությունների բարձրաստիճան այրերը:

1928թ. գրքափոխանակության կապ ստեղծվեց Բեռլինի և Վիեննայի հետ:

1959թ. ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրի հրամանի համաձայն, Գրադարանը սկսեց **անմիջական կապով** փոխանակություն կատարել արտասահմանյան երկրների հետ: Իսկ **1965թ.**, գրադարանի գրքափոխանակության ենթաբաժինը, որ համալրման բաժնի կազմում էր, **առանձնացվեց և դարձավ ինքնուրույն բաժին**:

Գրքափոխանակության աշխատանքները շարունակում էին զարգանալ, իսկ կապերը ընդլայնվում էին է ոչ միայն ԽՍՀՄ երկրների, այլև արտասահմանյան գրադարանների ու կազմակերպությունների հետ:

Կարևոր էր նաև սփյուռքահայության դերը Գրքափոխանակության գործում: Նրանց միջոցով, արտասահմանյան տարբեր երկրներում ստեղծված հարյուրից ավելի հրատարակություններից ստացվել է զգալի չափերի հասնող հայերեն լեզվով գրականություն:

Գրքափոխանակությունն այսօր

Համալրման գործընթացի ընթացքում այսօր էլ, ստացվող գրականության մի մասը դառնում է ավելորդ և ծանրաբեռնում գրադարանի գրքային հավաքածուները բազմօրինակ, ոչ սպասարկվող գրականությամբ:

Նման վիճակից դուրս գալու ճիշտ ճանապարհը դառնում է գրադարանների միջև գրքափոխանակության կազմակերպումը, որը ինքնին նպաստում է թե՛ գրքաշրջանառության ցուցանիշների բարձրացմանը, և թե՛ ընթերցողների պահանջների ժամանակին ու լրիվ բավարարմանը:

Լինելով Հայաստանի Ազգային գրադարանի կառուցվածքային ստորաբաժանումներից մեկը, Գրքափոխանակության և զարգացման ծրագրերի բաժինը իրականացնում է գրադարանի հավաքածուի համալրում՝ հայերեն, օտար լեզուներով, գործնական տեսակետից հայագիտական առավել կարևոր արժեք ունեցող արտասահմանյան հրատարակություններով, կատարարում է ներհայաստանյան և արտասահմանյան գրքափոխանակության, միջազգային կապերի ամրապնդման աշխատանքներ՝ նպաստելով Ազգային գրադարանի հավաքածուի հարստացմանը:

Գրքափոխանակության **կազմակերպման համար**՝

1/. Առանձնացնում է փոխանակման գրականություն, որի մեջ մուծվում է գրադարանին ոչ պետքական՝ կրկնվող գրականությունը (չհաշված, իհարկե, հնացած և դուրս գրվող գրականությունը, որը չի մտնում փոխանակման ունեցվածքի մեջ),

2/. Կազմում է փոխանակման գրականության ցուցակ՝ պարզեցված նկարագրություններով (հեղինակ, վերնագիր, հրատ. տեղ, թիվ, էջ, գին և այլն),

3/. Ցուցակը ներկայացնում է որևէ այլ գրադարանի, որը պատրաստ է փոխանակություն անելու: Երկու գրադարանների փոխանակման գրականության ցուցակների համեմատման միջոցով պարզվում է, թե ով ինչ կարող է փոխանակել:

1959թ.-ից առ այսօր, /ըստ կառավարության որոշման/, նախարարությունները, գերատեսչությունները և այլ կազմակերպություններ իրավունք ունեն իրենց գրադարանների ֆոնդերի չօգտագործվող գրականությունը **տրամադրել այլ գրադարաններին՝ անհատույց ձևով:** Սրանով առաջնորդվելով, Հայաստանի Ազգային

գրադարանը տարիներ շարունակ գրքեր է նվիրում ՀՀ-ում և ԼՂՀ –ում գտնվող գրադարաններին, դպրոցներին, կրթական հաստատություններին գրադարաններին, հայկական զորամասերին, քրեակատարողական հիմնարկներին և այլն:

ԱՂՅՈՒՄԱԿ 1.

Այսպես՝ 2013 թվականին այցելություն է կատարվել 4 մարզի 58 գրադարան և տարվել 4073 միավոր գրականություն: Ի դեպ, նշեմ, որ գրականությունը մարզեր է տարվում բիբլիոթեկուսով, որը դեռ 2007 թվականին Ֆրանսիայի Վանդեյ դեպարտամենտի կենտրոնական գրադարանից 961 միավոր գրականությամբ որպես նվեր ստացել էր մեր գրադարանը:

ԱՂՅՈՒՄԱԿ 2.

Այս տարի՝ 2014թ. այցելություն ենք կատարել 6 տարածաշրջանների 42 գրադարաններ և տարել 4407 միավոր գրականություն /Արագածոտնի մարզ, Եղվարդի տարածաշրջան, Գեղարքունիքի մարզ՝ Սևանի և Վարդենիսի տարածաշրջաններ, Տավուշի մարզ՝ Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջաններ, Շիրակի մարզ՝ Աշոցքի տարածաշրջան: Նախատեսվում է այցելել նաև Տավուշի մարզ՝ Բերդ-ի տարածաշրջան/:

Տարեցտարի ավելացել և, հուսով ենք, ավելանալու է արտասահմանյան կազմակերպությունների հետ գրքափոխանակության գործընթացը: Այսպես՝ անցած տարի՝ 2013 թվականին Հայաստանի Ազգային գրադարանը համագործակցելով արտերկրի **42 երկրների 161 կազմակերպությունների**, գրադարանների ու անհատների հետ, ուղարկել է **536** միավոր գիրք, փոխարենը ստացել՝ 394 միավոր:

ԱՂՅՈՒՄԱԿ 3.

Աշխարհասփյուռ հայությունը աշխարհի տարբեր ծայրերում ստեղծել է հայկական և **հայագիտական կենտրոններ**, որոնցից շատերի հետ այսօր ունենք սերտ կապեր:

Հարկ է նշել **ԱՄՆ-ում**. *Նյու Յորքից՝* Ամերիկայի հայկական գրադարան և թանգարանը, Համազգային հայ կրթական և մշակութային միության Նյու Յորքյան մասնաճյուղը, “Գրիգոր և Կլարա Զոհրապ” տեղեկատվական կենտրոնը, Ս. Ներսես հայկական գրադարանը, Ազգային առաջնորդարան՝ Հայ թեմի Սուրբ Ներսես Շնորհալի գրադարանը, *Վաշինգտոնից՝* Հայկական Ազգային ինստիտուտը, *Բեռլինից՝ /ՄԱ/,* Էդվարդ և Հելեն Մարտիկյան տեղեկատվական հետազոտության գրադարանը, Հայ ուսումնասիրության և հետազոտության ազգային ասոցիացիայի գրադարանը, *Լոս Անջելեսից՝* Հանրային գրադարան, *Սան Ֆրանցիսկոյից՝* Հայոց Ֆեդասպանության վերաբերյալ ռեսուրսների գրադարանը ուսուցիչների համար, Հովսեփ և Սյուզան Հակոբյան Արևելյան Ամերիկայի Կիլիկյան թեմի գրադարանը, **Անգլիայից՝** Կոմիտաս

ինստիտուտը, **Ավստրիայից՝** Միխիթարյան Միաբանությունը, **Գերմանիայից՝** «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի գրադարանը/Հալլե/ և Սփյուռքի ու ցեղասպանության հարցերն ուսումնասիրող գիտական ինստիտուտի գրադարանը, **Թուրքիայից՝** Կ. Պոլսոյ Պատրիարքութեան «Օրմանեան» Մատենադարանը, «ԱՐԱՍ» հրատարակչությունը, **Իսրայելից՝** Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի «Գալուստ Կիւլպէնկեան» Մատենադարանը, **Իտալիայից՝** Վենետիկի Միխիթարեան Մատենադարանը, Միլանի Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի գրադարանը, Հռոմի Լեոնյան վարժարանը, **Իրանից՝** Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի գրադարան-մատենադարանը, **Լիբանանից՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսութեան գրադարանը,** Հայկազյան համալսարանի հայագիտական Կենտրոնը, Համազգային Կենտրոնական վարչության «Վահե Սեթյան» տպարանը, Հայ Կաթողիկէ Զմմառու Արծիւեան Միաբանութեան Մատենադարանը, **Հոլանդիայից՝** Աբովյանի անվ. Մշակութային միության գրադարանը, **Հունգարիայից՝** «Տրանսիլվանիայի հայ արմատներ» կենտրոնը /Բուդապէշտում/, **Շվեդարիայից՝** Ս. Գրիգոր Լուսավորիչ գրադարանը, **Պորտուգալիայից՝** Գալուստ Գյուլբենկյան հաստատությունը /Լիսաբոն/, **Ռումինիայից՝** Բուխարեստի հայկական եկեղեցուն կից «Հովսեփ Դուդյան» Հայկական մշակույթի տան գրադարանը, Սուրբ Երրորդություն եկեղեցին, Ռումիանիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդարանը Բուխարեստում, "ԱՐԱՐԱՍ" հրատարակչությունը, **Ռուսաստանից՝** Հայ Առաքելական եկեղեցին՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմ /Ռոստով/, Ռուսաստանի Ազգագրական թանգարանը, **Սիրիայից՝** Հայկական Առաջնորդարանը, **Ֆրանսիայից՝** Նուբարյան մատենադարանը:

Աշխարհում հայտնի **օտարերկրյա խոշոր գրադարաններից շատերն ունեն հայկական գրականություն,** որի համալրմանը պարբերաբար օգնում է նաև Ազգային գրադարանը: Դրանցից են՝ **ԱՄՆ-ի** Կոնգրեսի գրադարանը Վաշինգտոնում, Դերբորնի համալսարանը Միչիգանում, Կրթական շրջագայությունների Սթենֆորդ ինստիտուտը, Բոստոնի գրադարանը, Կոլումբիա համալսարանի գրադարանը /Նյու Յորք/, Կալիֆորնիայի համալսարանի գրադարանը UCLA /Լոս Անջելես/, Մորգանի գրադարան և թանգարանը /Նյու Յորք/, Հարվարդի համալսարանի «Ուայդներ» գրադարան, **Անգլայում** Բրիտանական թանգարանը /Լոնդոն/, Օքսֆորդի համալսարանը, **Ավստրիայի** ազգային գրադարանը և Զալցբուրգի համալսարանը, **Բուլղարիայի** Կիրիլ և Մեթոդիի անվ. Ազգային գրադարանը /Սոֆիա/, **Իրանի և Լեհաստանի** Ազգային գրադարանները, **Հոլանդիայում** Ամստերդամի և Լեյդենի համալսարանները, **Ռուսաստանում** Պետական և Ազգային գրադարանները, Պատմության և կրոնի

պետական թանգարանը /Ս. Պետերբուրգ/, **Ֆրանսիայի** Ազգային գրադարանը և Պրովենսի համալսարանը:

Սփյուռքում, ինչպես տասնամյակներ առաջ, այժմ էլ կան հիշատակման արժանի շատ **անհատներ**, որոնք տարիների ընթացքում ապացուցելով իրենց հայրենանվեր էությունը, մեծ հավաքածուներ են նվիրաբերել գրադարանին:

Անկախության տարիների ընթացքում գրադարանի հավաքածուները արևմտահայ և արտասահմանյան գրականությամբ հարստացրել են այնպիսի նվիրատուներ, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ից. Վարդան Գրիգորյանը, Զիա Այվազյանը, Ժաք Թորոսյանը, Արա Ղազարյանը, Արա Սանջյանը, Փիթեր Քաուլին, Իրանից՝ Լևոն Մինասյանը, այժմ արդեն հայաստանաբնակ Ավո Հովհաննիսյանը, Ֆրանսիայից՝ Ռոպեր Տեր-Մերկերեանը, Եգիպտոսից՝ Սուրեն Բայրամյանը, Կանադայից՝ Էդիկ Բաղդասարյանը, Լիբանանից՝ Զավեն Մսերլեանը, Ժիրայր Դանիելյանը, Սուսաննա Սիրունյանը և այլն:

ԱՂՅՈՒՄԱԿ 4.

Սփյուռքի հայկական համայնքներում կատարվող մշակութային, քաղաքական, տնտեսական իրադարձությունները, մեր հայրենակիցների դժվարությունները եւ ձեռքբերումները, հայկական կառույցների աշխատանքը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում սովորաբար ներկայացվում է մամուլի միջոցով: Սակայն, աշխարհում տպագրվող հայկական մամուլի միայն մի մասն է, որ կարողանում է ձեռք բերել ազգային գրադարանը: Ցանկալի կլիներ համալրել գրադարանը նաև սփյուռքի այն հանդեսներով և լրագրերով, որոնք այժմ բացակայում են մեր հավաքածուներում: Դա կարող է կազմակերպվել նաև փոխանակության միջոցով:

Սփյուռքի մամուլի առկայությունը կարևոր է գրադարանի համար, քանի որ մեր ընթերցողը անմիջականորեն տեղեկացվում է հայկական համայնքներում կատարվող մշակութային, քաղաքական, տնտեսական իրադարձությունների մասին:

Սակայն հաճախ ստվերում է մնում աշխարհի տարբեր երկրներում բնակվող՝ ճանաչված, տարբեր բնագավառներում լուրջ հաջողությունների հասած հայերի մասին տեղեկատվությունը: Ցանկալի կլիներ նաև խոսել սփյուռքի կազմակերպությունների, մեր հայրենակիցների ձեռքբերումների կամ ծագած խնդիրների մասին, իրազեկ լինել ու տեղեկացնել Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ կատարվող դեպքերի մասին, ինչպես նաև վեր հանել և ներկայացնել հայազգի բարերարներին և նրանց կատարած բարեգործությունները:

1991-2013թ. ՀՀ ԵՎ ԼՂՀ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՊԱՏԿԵՐ

ԱՅՈՒՄԱԿ 1

Տարեթիվ /թ./	ՀՀ և ԼՂՀ գրադրանաններին տրվել է /Միավոր գրականություն/	Տարեթիվ /թ./	ՀՀ և ԼՂՀ գրադրանաններին տրվել է /Միավոր գրականություն/
1991	2543	2005	2796
1992	2543	2006	3025
1993	2097	2007	5586
1997	2271	2009	8946
1998	2246	2010	5525
2002	2024	2011	4376
2003	2207	2012	3069
2004	3094	2013	4073
		ԸՆԴ.	56421

2013թ. ԲԻԲԼԻՈԳՈՒՍՈՎ ՀՀ ՄԱՐԶԵՐ ՏԱՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՅՈՒՄԱԿ 2

		Գրադարանների քանակը	Ընդհ.	Մամուլ	Գիրք	ՄՆ	Ընդամենը ըստ լեզուների	Լեզու
Ապրիլ 22	Արագած. Թալինի ք/գր	14	885	32	670	4	706	Հայ.
					179		173	Ռուս.
							6	Այլ լեզ.
Հունիս 17	Շիրակ, Մարալիկի ք/գր	14	974	14	787		801	Հայ.
				114	59		165	Ռուս.
							8	Այլ լեզ.
Օգոստոս 7	Վայոց ձոր, Եղեգնաձորի ք/գր	13	1066	3	959		962	Հայ.
					104		104	Ռուս.
							0	Այլ լեզ.
Սեպտեմբեր 5	Սյունիք, Սիսիանի ք/գր	17	1148	73	919		992	Հայ.
				33	123		156	Ռուս.
							0	Այլ լեզ.
ԸՆԴԱՄԵՆԸ		58					3461	ԸՆԴ. ՀԱՅ.
							598	ԸՆԴ. ՌՈՒՍ.
							14	ԸՆԴ. ԱՅԼ ԼԵԶ.
			4073	269	3800	4	4073	

ԱՂՅՈՒՄԱԿ 3

2013թ. արտասահմանյան կազմակերպությունների հետ արված փոխանակության

Հ/Հ	Կազմակերպության անունը	Տրվ. է	Ստացվել է
1	Ռուսաստանի Ազգային գրադարան /Ս.Պետերբուրգ/	196	56
2	Ռուսաստանի Պետական գրադարան (РГБ)	13	39
3	Ռուսաստանի գիտությունների ակադեմիա /ИНИОН/	6	3
4	Բելոռուսի Ազգային գրադարան	12	12
5	Բուլղարիայի Ազգային գրադարան	14	
6	Ֆրանսիայի ազգային գրադարան	19	15
7	Ճապոնիայի Ազգային գրադարանը	13	27
8	Կորեայի ազգային գրադարան	11	18
9	Գերմանիայի Ազգային գրադարան	14	
10	Ավստրիայի ազգային գրադարան		1
11	ԱՄՆ, Կոնգրեսի գրադարան	46	2
12	ԱՄՆ, Կառնեգի կենտրոն (Վ/ Գրիգորյան)	0	7
13	ԱՄՆ, Կոլորադո, Հիսուս Քրիստոսի եկեղեցի (Nathan C. Jessop)	0	5
14	Ռումինիայի ազգային գրադարան	7	
15	Լեհաստանի ազգային գրադարան	4	0
16	Իրանի Ազգային գրադարան	15	
17	Լիբանան, Բեյրութ, Հայկազյան համալսարան	5	15
18	Լիբանանի Հայ ավետարանական քոլեջ	4	
19	Մոլդովայի գիտությունների ակադեմիա		12
20	Տաջիկստանի ազգային գրադարան	5	5
21	Ուզբեկստանի ազգային գրադարան	4	
22	Եվրամիության անդամ երկրների ներկայացուցչություն /գրադարանում ՀՀ վարչապետի հետ կայացած հանդիպման ժամանակ/	1	
23	Ռուսաստանի՝ Մոսկվայի հայ համայնք	6	22
25	Ռուսաստանի՝ Սանկտ-Պետերբուրգի հայ համայնք	1	1
26	Ռուսաստանի՝ Կրասնոդարի հայ համայնք	2	4
27	Ռուսաստանի՝ Կալուգայի հայ համայնք	3	5
28	Ուկրաինա՝ Կիևի հայ համայնք	9	19
29	Լատվիայի հայ համայնք	2	6
30	Վրաստանի՝ Աջարիայի հայ համայնք	4	19
31	ԱՄՆ-ի Հայ ավետարանչական ընկերակցություն՝ AMAA	2	11
32	Շվեյցարիա, Ժնևի հայ համայնք	1	1
33	Հունաստանի հայ համայնք	16	63
34	Բելգիայի Անթվերպեն ք. «Նուարդ» Մշ. Միության գրադարան	20	12
35	Լեհաստանի հայ համայնք	5	11
36	Իրաք՝ Բաղդադի հայ համայնք	1	1
37	Իրան՝ Սպահանի հայ համայնք	1	2
38	Եգիպտոսի ՀԲԸՄ շրջանային հանձնաժողով /Պերճ Թերզյան /	10	
39	Թուրքիայի Հայ Պատիարքարան	10	

40	Իսրայել, Երուսաղեմի Հայ Պատրիարքարան	10	
41	Իտալիա, Միսիթարյան Միաբանություն	10	
42	Իրանի /Սպահանի/ հայոց թեմական խորհուրդ	10	
43	Լիբանան, Կիլիկիոյ կաթողիկոսություն	10	
44	Պորտուգալիա, Գյուլբենքյան հիմնարկություն	10	
46	Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարան	2	
47	Ֆրանսիայի Արտգործնախարարություն /դիվանագիտական արխիվների բաժնի վարիչ՝ Պասկալ Իվենի միջոցով/	2	
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	536	394

42 երկիր - 161 կազմակերպություն, գրադարան և անհատ

ԱՂՅՈՒՍԱԿ 4

2013թ. անհատների հետ արված փոխանակության

Հ/Հ	Կազմակերպության անունը	Տրվ. է /Միավոր/	Ստացված է /Միավոր/
1	«Անանիա Շիրակացի. Կենսամատենագիտություն:-Եր., 2012, 86էջ » գիրքը, կազմողներին	6	0
2	«Հայաստանի գրադարանները 2011 թվականին :-Եր., 2012, 95էջ » գիրքը կազմողին	1	0
3	Բ.Մելյան	1	0
4	Կրթություն թերթի գլխ.խմբագիր Գագիկ Մինասյան,	1	0
5	Սպարտակ Ասոյան	2	0
6	Գևորգ Ներսիսյան	1	6
7	Արշակ Բալյան	1	6
8	Ռ. Կարապետյան	1	6
9	Կարինե Զենջիրջյան	1	2
10	Գևորգ Յազըճյան	1	14
11	Աննա Մարտիրոսյան /Հոլանդիա/	5	2
12	Ռոբեր Տեր-Մերկերյան	0	258
13	Սարգիս Հացպանյան	0	2
14	Վարուժան Ալեքսանդրյան /Ֆրանսիա/	0	10
15	Վարդան Դերիկյան	10	0
16	Լևոն Զգմեջյան /Ճարտարապետ/	1	3
17	Սուրեն Բայրամյան /Եգիպտոս/	1	0
18	Տիգրան Սարուխանյանը	11	26
19	Արսեն Մելիքսեթյանը	1	3
20	Հենրիկ և Արծվի Բախչինյաններ	0	63
21	Գուրգեն Գրիգորյան	0	4
22	Ստեփան Պապիկյանից	0	20
23	Անուշավան Վանցյանից	0	6
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	45	431

ԱՂՅՈՒՄԱԿ 5

2014թ. արտասահմանյան կազմակերպությունների հետ արված փոխանակության

Հ/Հ	Կազմակերպության անունը	Տրվ. է
1	Իրանի «Ալիք» թերթի խմբ.	1
2	Սփյուռքահայ օջախներին	74
3	Վրաստանի Պառլամենտի գրադարան	9
4	Բելոռուսի Ազգային գրադարան	22
5	Բուլղարիայի Ազգային գրադարան	6
6	Ֆրանսիայի ազգային գրադարան	24
7	Ճապոնիայի Ազգային գրադարանը	7
8	Լեհաստանի Ազգային գրադարան	6
9	Լիբանան, Հայ ավետ. Քոլեջ, Զ. Մսրրյան	1
10	Ավստրիայի ազգային գրադարան	5
11	Հոլանդիա, ամստերդամի գրադարաններ և Ա. Մարտիրոսյան	6
12	Լատվիայի ազգ. գրադարան	2
13	Ավստալիայի ազգային գրադարան	5
14	Ռումինիայի ազգային գրադարան	11
15	Արգենտինայի Ազգային գրադարան	5
16	Թուրքիայի «Արաս» հրատ.	4
17	Լիբանան, Անթիլիաս, Կաթողիկոսություն Մեծի տանն Կիլիկիոյ	48
18	Մոսկվայի Լազարյան դպրոց	2
19	Մակեդոնիայի ազգային պատմության ինստիտուտ	3